

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԿՐԿԻՆ ՓԱՐԻԶՈՒՄ

Փարիզ վերադառնալուց հետո, ժամը 16-ին, Վեհափառ Հայրապետը առաջնորդվեց Պեր-Լաշեզի գերեզմանատուն, ուր գեղեցիկ մի ծաղկեպսակ զետեղեց Ֆրանսիայի համար զոհված հայ ռազմիկների հուշարձանի առաջ: Այս առթիվ Հայոց Հայրապետը, ոգեկոչելով Ֆրանսիայի ազատության և պայծառ ապագայի համար զոհված ֆրանսիացի և հայ մարտիկների հիշատակը, հանդես եկավ ոգեշունչ հետևյալ ճառով.

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՊԵՐ-ԼԱՇԵԶԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ
(Կիրակի, 3 հունիսի 1979 թ.)

Հոգեկան մեծ մխիթարություն է ինձ համար, որ իմ Ֆրանսա այցելության վերջին օրերուն պատեհությունը ունիմ աղօթելու ձեզի հետ մեկտեղ այս գեղեցիկ հուշարձանին առջև, որ ազատություններու երկիր՝ ֆրանսական բարի հողի վրա կբարձրանա ի հիշատակ բոլոր այն զինվորներուն և նահատակներուն, որոնք տառապանքի և հերոսական մարտերու մեջ զոհվեցան վասն հայ հավատքին ու հայրենիքին և վասն Ֆրանսայի ազատության:

Ես կուգամ Հայաստանեն, ուր նույնպես մեր ժողովուրդը, առանց բացառության, ամեն տարի խոր հուզումով կոգեկոչե հիշատակը ցեղասպանության նահատակվածներուն, ինչպես նաև այն զոհերուն, որոնք ինկան երկու համաշխարհային պատերազմներու ընթացքին, հանուն արդարության և ազատության:

Երկրորդ համաշխարհային պատերազմին, երբ ֆրանսացի ժողովուրդը հեղեղի նման արյուն թափեց, բոլոր ճակատներուն վրա եղբայրացած սովետական ժողովուրդներու հետ միասին, անոնց շարքերուն մեջ էին նաև ավելի քան երկու հարյուր հազար հայեր, Հայաստանի քաղաքացիներ, որոնք զոհվեցան նույն այդ իդեալներու իրականացման համար:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՊԵՐ-ԼԱՇԵԶԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ՝ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ
ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԱՌՋԵՎ. ՓԱՐԻԶ

ՀԱՅԿ. ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՊԵՐ-ԼԱՇԵԶԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ՝ ԶՈՀՎԱԾ ՀԱՅ ՌԱԶՄԻԿՆԵՐԻ ՀՈՒՇԱՐԶԱՆԻ ԱՌՋԵՎ. ՓԱՐԻԶ

Ահա այս վկայությունն ալ կբերեմ ես այստեղ: Կկամենամ հաստատել զգացումներու և գիտակցության նույնությունը համայն հայության, որով ձեր այս հուշարձանը կնկատեմ բոլոր հայերու սրտին մոտ: Նաև Հայաստանցիներու սրտին մոտ հուշարձան մը, որովհետև Հայաստանի մեջ, վստահ եղեք, ֆրանսացի ժողովուրդը երկու համաշխարհային պատերազմներու ընթացքին իր հերոսական սխրանքներուն և թափած արյան համար մասնավոր տեղ մը կգրավե հարգանքի, գնահատանքի և հիացմունքի:

Այս վկայությունները բերելով ձեզի, կաղոթեմ առ Աստված, որ այն մեծ իդեալները, որոնց համար սերունդներ զոհվեցան, իրապես կյանքի կոչվին աշխարհի վրա և վերանան անարդարությունները, ազգամիջյան թշնամությունները ու պատերազմները:

Այս հուշարձանները թող ըլլան նաև հուշարար աշխարհին համայն, որպեսզի մարդիկ և ազգություններ հասկնան զիրար, համերաշխ գործակցին ու աշխատին ձեռք ձեռքի տված, հասցնել մարդկությունը խաղաղության նավահանգիստը:

Թող Աստված օրհնե փառքերու երկիր Ֆրանսան և միշտ պահե-պահպանե խաղաղության, բարգավաճումի և ծաղկումի մեջ այժմ և հավիտյան. ամեն:

Այնուհետև Հայոց Հայրապետի նախագահությամբ կատարվեց հոգեհանգստյան արարողություն, որին ներկա էին ֆրանսահայ նախկին ռազմիկներ և դիմադրական շարժման հայ վետերաններ:

ԱՅՑ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՇԻՐՄԻՆ

Ավելի ուշ Վեհափառ Հայրապետը Պեր-Լաշեզում այցելեց հայ ժողովրդի ազգային հերոս զորավար Անդրանիկի շիրիմ և նրա հուշարձանի առաջ զետեղեց ծաղկեպսակ: Այստեղ ևս տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն Հայոց Հայրապետի նախագահությամբ, որի ավարտին Հայոց Հայրապետը ոգեկոչեց անմոռաց հիշատակը զորավար Անդրանիկի և հայրենիքի ազատության ճանապարհին նահատակված բոլոր հայ մարտիկների հետևյալ հուզիչ ճառով.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՇԻՐՄԻ ԱՌՋԵՎ
(3 հունիսի 1979 թ.)

Այս գերեզմանին առջև մեր հոգիի և մտքի աչքերով կտեսնենք վերջին հարյուր տարիներու ընթացքին մեր ժողովուրդի մղած անհավասար պայքարը իր արժանապատվության, իր գոյատևման և ազատության համար: Այդ կկոչվի, ինչպես գիտեք, հայ ազատագրական շարժում, որուն արյունոտ ճանապարհին վրա կբարձրանա հերոսական կերպարը զորավար Անդրանիկի:

Քիչ առաջ երգվածը ապացույցն է, թե ինչ պաշտամունք ունի մեր ժողովուրդը Անդրանիկի նկատմամբ: Ան խորհրդանիշն է դարձած հայ ազատագրական սրբազան պայքարի:

Սփյուռքի տարածքի վրա, ինչպես նաև Հայաստանի մեջ, ամենասիրելի և ամենաժողովրդականացած երգերեն մեկն է «Իբրև արծիվ սավառ-

նում ես» երգը: Այսօր Հայաստանի մեջ, ընտանեկան հարկերե ներս, խընջույքներու թե տարբեր առիթներով, ամեն անգամ խանդավառությամբ կերգվին Անդրանիկին նվիրված երգերը, որոնք հայ ժողովուրդի զգացողության մեջ նվիրական ոգեկոչումներ կհանդիսանան: Այդ երգի երաժշտության և մոգական ուժ ունեցող բառերու իմաստին ընդմեջեն, հայ ժողովուրդը ոչ միայն կհիշե իր հերոսական անցյալը, այլև տեսիլքը կապրի իր ապագայի, իր ապագա ընելիքի: Կարևորը այսօր այն չէ, թե ինչպե՞ս մենք ազգովին, ներկա պայմաններու մեջ, պիտի կարողանանք շարունակել Անդրանիկի կես թողած գործը, այլ կարևորը այն է, որ սրբությամբ պահենք գիտակցությունը, անսասան հավատքը, թե կուգա օրը արդարության:

Այս գիտակցությամբ կապրինք մենք այսօր և պիտի ապրինք, թե՛ Հայաստանի և թե՛ սփյուռքի տարածքի վրա: Եվ այս գիտակցությունն ու հավատքը պետք է ներշնչեք դուք ձեր զավակներուն, և անոնք ալ՝ իրենց զավակներուն: Այսպես է, որ լավագույն ձևով մեր հարգանքը մատուցած պիտի ըլլանք մեր հերոսներուն, նաև զորավար Անդրանիկի հիշատակին:

Թող Աստված խաղաղության և հավետ լույսի մեջ պահե Անդրանիկի և բոլոր Անդրանիկներու հոգիները, որոնք զոհվեցան ազատության արյունոտ ճանապարհին վրա: Թող Աստված մշտանորոգ ուժ և եռանդ պարգևե հայ ժողովուրդին, որպեսզի ան տակավ զորանա, աճի և միշտ հավատարիմ մնա մեր հերոսներու ուխտին և միշտ պատրաստ շարունակելու անոնց գործը:

Այս հավատքով է, որ կուգամ Հայաստանեն և այս հոգիով է, որ աղոթք կկարդամ այսօր այստեղ:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի». ամեն:

Պեր-Լաշեզում տեղի ունեցած հոգեհանգստյան արարողություններին ներկա էին նաև Առնուվիլի քաղաքագլուխ Կլոդ Բիժելը, ֆրանսիացի բարձրաստիճան զինվորականներ և այլ պաշտոնական անձնավորություններ:

* *
*

Վեհափառ Հայրապետը սույն արարողությունների ավարտին Հոգվոց արտասանեց նաև Պեր-Լաշեզում թաղված հանգուցյալ տ. Վռամշապուհ Քիսպարյան և տ. Արտավազդ Սյուրմեյան արքեպիսկոպոսների շիրիմների վրա:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹՅԱՆ «ԱԼԵՔՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՏԱԿ

Հունիսի 6-ին, չորեքշաբթի օրը, երեկոյան ժամը 18.30-ին, Վեհափառ Հայրապետը այցելեց Հ. Բ. Ը. Միության Փարիզի մասնաճյուղի «Ալեքս Մանուկյան» մշակութային տուն, ուր դիմավորվեց ժողովրդական խանդավառությամբ և ոգևորությամբ:

Հայոց Հայրապետի ժամանումը հետևյալ ուղերձով ողջունեց Միության Ֆրանսիայի շրջանի վարիչ-քարտուղար Արթո Համբարձումյանը.

«Վեհափառ Տեր,

Այս օրերուն ուրախ և երջանիկ է բովանդակ ֆրանսահայ գաղութը, որովհետև ան կվայելե շնորհաբեր այցելությունը իր հոգևոր Գերագույն Պե-

տին՝ ս. Լուսավորիչի Աթոռի արժանավոր գահակալ Ն. Ս. Օ Տ. Տ. Վազգեն Առաջինի:

Իսկ այս երեկո կրկնապես երջանիկ են Հ. Բ. Ը. Միության Փարիզի մասնաճյուղի պատասխանատուներն ու անդամները, որովհետև անոնք բացառիկ պատեհությունը կունենան վայելելու ներկայությունը Ամենայն Հայոց առաքելաշնորհ Հայրապետին, այն մշակութային հարկին տակ, որուն հանդիսավոր բացումը կատարած էր նույն Ինքն Սուրբ Օծությունը, ճիշտ չորս տարի առաջ՝ 15 հունիս 1975-ին:

Մեծ ազգասեր Պողոս Նուպար փաշայի կողմե 1906 թվականին հիմնըված Հ. Բ. Ը. Միությունը 73 տարիե ի վեր անխափան կշարունակե իր նախախնամական առաքելությունը հայ ազգային կյանքեն ներս, հնարավոր չափով հասնելով մեր ժողովուրդի բազմապիսի կարիքներուն ու հատկապես զարկ տալով նորահաս սերունդի կրթական և իմացական զարգացումին:

Մեզի համար մեծ գոհունակություն է հաստատել, թե Հայաստանյայց եկեղեցվո հայրապետներն ու բարձրաստիճան եկեղեցականները միշտ զորավիգ հանդիսացած են Հ. Բ. Ը. Միության և ի մասնավորի Դուք, Վեհափառ Տեր, Ձեր սրբատառ կոնդակներով և խոսքերով միշտ բարձր գնահատած եք Միությանս ազգանվեր գործունեությունը:

Իր բարեսիրական գործունեության կողքին Հ. Բ. Ը. Միությունը կջանա, սեփական վարժարաններու և մշակութային ու երիտասարդական կեդրոններու խիտ ցանցի մը շնորհիվ, ամենուրեք վառ պահել հայ լեզվի և մշակույթի ջահը: Ֆրանսահայ գաղութեն ներս թեև մեր Միությունը չունի սեփական վարժարան, սակայն ան նյութապես և բարոյապես կօժանդակե Փարիզի հայկական ամենօրյա վարժարաններուն և կրթաթոշակ կհատկացնե հարյուրի մոտ արժանավոր ուսանողներու:

Բաց աստի, ան կպահե Նուպարյան Մատենադարանն ու Մարի Նուպար հայ ուսանողական տունը, որոնց մատուցած օգտաշատ ծառայությունները ծանոթ են բոլորին, և սեփական ներկայանալի հավաքատեղիներ ունի Մարսեյլի, Վալանսի և Փարիզի հայաշատ կեդրոններուն մեջ, ուր տեղի կունենան հայերեն լեզվի շաբաթօրյա դասընթացքներ, դասախոսություններ, երիտասարդական հավաքույթներ և մշակութային այլ ձեռնարկներ:

Վեհափառ Տեր, իսկապես մեծ բախտ և պատիվ է մեզի համար վայելել Ձեր օրհնաբեր ներկայությունը այս մշակութային հարկեն ներս, որ կկրե անունը ազգային անզուգական բարերար և Միությանս ցկյանս նախագահ տիար Ալեքս Մանուկյանի:

Ձեր շնորհազարդ անձին մեջ մենք կողջունենք հայ ժողովուրդի երկու ամենանվիրական սրբությունները՝ Մայր Աթոռ ս. Էջմիածինն ու վերածնած մայր հայրենիքը, որոնք խորունկ տեղ մը կգրավեն մեր սրտերուն մեջ:

Ձեր բազմաշնորհ անձին մեջ մենք կողջունենք նաև հայոց շինարար կաթողիկոսը, որ Իր հայրապետության տարիներուն շենցուց և պայծառացուց Հայաստանյայց ս. եկեղեցին, վերանորոգեց հայրենի սրբավայրեր և իրականացուց ուրիշ բազմաթիվ շինարարական ծրագիրներ, վերակազմակերպեց հոգևոր ճեմարանը, հիմը դրավ հայրենիք-սփյուռք մշակութային հարաբերություններու ոսկյա կամուրջին ու փոթորկոտ շրջանի մը հաճությամբ և իմաստությամբ ղեկավարեց Հայաստանյայց եկեղեցվո հինավուրց նավը:

Թող Տերը անսասան պահե մեր ս. եկեղեցին, մեր հավատքի վեմ ս. Էջմիածինն ու մեր ծաղկող հայրենիքը:

Թող Տերը արևշատություն պարգևե Ձերդ Վեհափառության և ավելցնե Ձեր թանկագին կյանքին տարիները, որպեսզի տակավին երկար ժամանակ շարունակվի հոգեկան և նյութական վերաշինության այն հսկա աշխատանքը, որուն ձեռնարկեցիք աննկուն հավատքով և մեր շինարար կաթողիկոսներու օրինակով Ձեր գահակալության առաջին իսկ օրեն:

Որդիական խոնարհությամբ Ձեզի բարի գալուստ կմաղթենք, սիրելի Վեհափառ, ու Ձեր օրհնությունը կխնդրենք մշակութային այս հարկին»:

Տիկին Մերի Գործունյանը, հանուն Միության Փարիզի մասնաճյուղի Տիկնանց հանձնախմբի, ջերմորեն ողջունեց Հայոց Հայրապետի ներկայությունը հետևյալ ելույթով.

«Վեհափա՛ռ Տեր,

Բարեգործականի Տիկնանց հանձնախումբը ուրախությամբ և հուզումով Ձեզ կհայտնե իր խորին շնորհակալությունները, Ձեր ներկայության համար մեր մեջ:

Տիկնանց հանձնախումբը իր համեստ օժանդակությունը կբերե բարեգործական միության իր ավանդական ճաշկերույթով: Ան իր գործակցությունը կբերե նաև մյուս հանձնախումբերուն: Տիկնանց հանձնախումբին ամենեն կարևոր և սրբազան աշխատանքն է իր չորեքշաբթի, հետ միջօրյա դպրոցը, ուր երկսեռ մանուկներ, 5-են 13 տարեկան, կուգան այս հարկին տակ թոթեվելու մեր մեծասքանչ հայ լեզուն, երգելու հայ երգը և պարելու հայ պարը:

Հայապահպանության համար մեր մղած այս պայքարը դժվարին պայքար մըն է: Դժվարին է ապրիլ երկրի մը մեջ և ըլլալ թե՛ նույն և թե՛ տարբեր քան այդ երկրի ժողովուրդը:

Հավելվածական ջանք մը պետք է տանիլ հայրենիքեն դուրս հայ մնալու համար:

Սակայն մեկ բան կա, որ կօգնե մեզի և հայկականությունը վառ կպահե մեր մեջ. ան ալ մեր եկեղեցին է:

Մենք այս երկրի ժողովուրդին մյուս կկազմենք, այս ազգին ճակատագրին կենթարկվինք, սակայն մեր եկեղեցին, մեր կրոնքը տարբեր է: Մեր հավատքի օրրանը կգտնվի մեր հայրենիքին մեջ, սուրբ Էջմիածին: Եվ մենք մեր կրոնքով, մեր դարավոր և փառավոր եկեղեցական ծեսերով կշարունակենք մնալ հայ քրիստոնյաներ, հավատարիմ մեր պապերու կրոնքին և լեզվին, որպեսզի բոլոր անոնք, որոնք նահատակվեցան իրենց կրոնքին և լեզվին պահպանման համար, անգամ մը ևս չմեռնին:

Մեր փոքրիկներուն, որոնք հայ լեզվին, հայ մշակույթին ապագան են, մենք կջանանք սորվեցնել, որ բնախոսական հայրենական ժառանգության կողքին իրենք ստացած են նաև մշակութային հայրենական ժառանգություն մը, որուն պետք է մնալ հավատարիմ, և որ իրենց պիտի բերե իրենց ինքնագիտակցության բանալին:

Սիրել և խոսիլ մեր «հայրենահամ անուշ մայրենին», ինչպես կգրե Պարույր Սևակը, ճանչնալ և գնահատել հայ հանճարը, հպարտ ըլլալ մեր ծագումով, ահա ինչ որ Տիկնանց հանձնախումբը, ինչպես նաև Փարիզի զանազան թաղերու մեջ գտնվող ուրիշ հայ միություններու դպրոցներ կփափաքին սորվեցնել մեր ֆրանսահայ մանուկներուն:

Վեհափառ Տեր, այս գետնի վրա Ձեր այցելությունը մեր գաղութին մեջ հրաշքներ կգործե:

Անցյալ շաբաթ կգտնվեի Մարսիլիա և հուզումով ականատես եղա Ձեր այցելության ձգած անմոռանալի հիշատակներուն: Ձեր այցելությունները շատ մը ծագումով հայերու մոտ ազգային գիտակցության կայծեր կվառեն:

Հուզիչ էր տեսնել Համբարձման օրը մեր բոլոր մանուկներուն և ուսանողներուն երջանկությունն ու հպարտ կեցվածքը: Մենք զգացինք, թե անոնք որքան տպավորված էին և որքան անոնց մատղաշ հոգիներուն մեջ այդ օրվան հիշատակը պիտի մնա անմոռանալի:

Հուզիչ էր տեսնել տարեց հայ պապիկներուն անզսպելի արցունքները, երբ Ձեր օրհնյալ Աջեն կստանային սուրբ հաղորդությունը:

Մեծ է թիվը ֆրանսահայերուն, որոնք միջոցը չեն ունեցած այցելելու հայրենիք և Մայր Աթոռ սուրբ Էջմիածին, բայց Ձեր այցելությունները անոնց առիթը կընծայեն Ձեր սուրբ Աջը համբուրելու և Ձեր օրհնությունները ստանալու:

Կաղոթենք առ Աստված, որ Ձեզ միշտ պարգևե քաջառողջություն և արևշատություն, որպեսզի շարունակեք գլխավորել և առաջնորդել հայկական եկեղեցին մեր վերածնած փառապանծ հայրենիքին և սփյուռքին մեջ»:

Հանդիսության ժամանակ գործադրության դրվեց գեղարվեստական խնամված մի ծրագիր՝ բաղկացած հայրենաշունչ արտասանություններից, երգերից և նվագից:

Հավաքույթի ավարտին ելույթ ունեցավ նաև Հայոց Հայրապետը, տվեց Իր օրհնությունը՝ բարձր գնահատելով Հ. Բ. Ը. Միության հայապահպանման, կրթական, մշակութային ու ազգասիրական գործունեությունը, որպես նախախնամական գործ մեր ժողովրդի կյանքում՝ ի հայրենիս և ի սփյուռս աշխարհի:

* *
*

Այսօր Լոնդոնից Փարիզ ժամանեցին տ. Շահե Ամեմյան և տ. Ներսես Պոզապալյան սրբազանները՝ ողջունելու Հայոց Հայրապետին: